

**mConverse****Մոբայլ բանկային ծառայության տեղեկատվական ամփոփագիր***Դեկտեմբերի 27, 2014թ.*

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) mConverse մոբայլ բանկային ծառայությունը հնարավորություն է տալիս սմարթֆոնի, պլանշետի կամ համակարգչի օգնությամբ իրականացնել բանկային գործարքներ և վճարումներ առևտրի և սպասարկման կետերում:

mConverse մոբայլ բանկային ծառայությունից կարելի է օգտվել “Գնորդ” կամ “Մուլտի-վաճառող” կարգավիճակներով: “Մուլտի-վաճառող”-ը հնարավորություն ունի մատուցված ծառայությունների և ձեռք բերված ապրանքների դիմաց mConverse համակարգի միջոցով ստեղծել և “Գնորդին” ներկայացնել վճարման հաշիվ, իսկ Գնորդը հնարավորություն ունի բանկային գործարքներ իրականացնել և կատարել վճարումներ առևտրի և սպասարկման կետերում:

**mConverse գործառնությունները՝****Մոբայլ Բանկինգ**

- Մնացորդի հարցում - ստուգել mConverse հավելվածին կցված հաշիվների մնացորդները
- Սմարթ տրանսֆեր - փոխանցել գումար Բանկի այլ հաճախորդի հաշվին՝ համապատասխանաբար մուտքագրելով կամ սկանավորելով վերջինիս mConverse մոբայլ բանկ համակարգում գրանցված հեռախոսահամարը կամ անհատական QR կոդը կամ կիրառելով NFC տեխնոլոգիան:
  - Փոխանցում Բանկի ներսում - կատարել ՀՀ դրամով փոխանցում սեփական հաշիվների միջև և Բանկի հաշվետեր հաճախորդներին, նաև՝ արտարժույթի փոխանակում՝ սեփական հաշիվների միջև
  - Փոխանցում այլ բանկ - կատարել ՀՀ դրամով փոխանցում ՀՀ այլ բանկերում առկա իր կամ այլ անձանց հաշիվներին
  - Գործարքների պատմություն - դիտել գործարքները, դրանց կարգավիճակն ու մանրամասները, չեղարկել դեռևս համակարգի կողմից մշակվող «Ընթացքում» կարգավիճակով գործարքները
  - Բանկումատների հասցեներ - քարտեզի վրա տեսնել Բանկի բանկումատները
  - Տարադրամի փոխարժեքներ - ծանոթանալ Բանկի փոխարժեքներին, օգտվել փոխարժեքի հաշվիչից
  - Հաշվի քաղվածք - դիտել հաշիվների քաղվածքները

## Մոբայլ Առևտուր

• Կատարել վճարումներ mConverse մոբայլ բանկ համակարգի առևտրի և սպասարկման կետերում՝ տրամադրելով mConverse մոբայլ բանկ համակարգում գրանցված հեռախոսահամարը կամ անհատական QR կոդը, կամ կիրառելով NFC տեխնոլոգիանը:

- Ծանոթանալ գեղչերին և ակցիաներին:
- Մուլտի-վաճառողի դեպքում՝ ստեղծել վճարման հաշիվներ, դիտել ստեղծած վճարման հաշիվների ցանկը և հայտարարել գեղչեր և ակցիաներ:

## Վճարումներ

- Կատարել կոմունալ վճարումներ, ինչպես նաև լիցքավորել բջջային հեռախոսը, վճարել ինտերնետի համար:
  - Հաճախ իրականացվող վճարումները հիշել “Նախընտրելիներ” ցանկում, ինչպես նաև կարգավորել պարբերական վճարումները:

## Օգտվելու նախապայմանները

mConverse մոբայլ բանկային ծառայության օգտատեր դառնալու համար անհրաժեշտ է այցելել Բանկի Գլխավոր գրասենյակի Հաճախորդների սպասարկման գրասենյակ կամ մասնաճյուղ\* .

- Անձը հաստատող փաստաթղթով
- Բջջային հեռախոս՝ Android կամ iOS օպերացիոն համակարգի առկայությամբ և ինտերնետ մուտք գործելու հնարավորությամբ
- Այլ անձի փոխարեն ներկայանալու դեպքում՝ պատշաճ վավերացված՝ բանկային հաշվի տնօրինման լիազորությամբ:

Ծառայությունից օգտվելու համար անհրաժեշտ է ինտերնետ կապ:

mConverse մոբայլ բանկային ծառայությունից օգտվելու անհրաժեշտ նախապայման է առնվազն մեկ ՀՀ դրամով հաշվի առկայությունը: Վերջինիս բացակայության դեպքում Բանկի աշխատակիցը նախ բացում է դրամային հաշիվը, այնուհետև տրամադրում ծառայությունը:

Բանկի Գլխավոր գրասենյակի Հաճախորդների սպասարկման գրասենյակում կամ մասնաճյուղում հաճախորդը Բանկի աշխատակցի օգնությամբ կատարում է գրանցման համար անհրաժեշտ քայլերի հաջորդականությունը, որից հետո mConverse մոբայլ բանկային համակարգը հասանելի է դառնում սմարթֆոնի mConverse ծրագրային հավելվածից կամ վեբ հարթակից՝ [mobile.conversebank.am](http://mobile.conversebank.am)

\* Այն մասնաճյուղերի ցանկին, որտեղ կարող եք ակտիվացնել mConverse ծառայությունը, ծանոթանալու համար կարող եք զանգահարել հետևյալ հեռախոսահամարով (+374 10) 511 211:

## Սակագներ

Ծառայություն	Սակագին
Փոխանցում սեփական հաշիվների միջև	0 ՀՀ դրամ
Գնորդի համար՝ առևտրի և սպասարկման կետերում վճարումների դիմաց միջնորդավճար	0 ՀՀ դրամ
Գնորդի համար՝ սպասարկման տարեկան վճար	0 ՀՀ դրամ
Սմարթ տրանսֆեր	1% յուրաքանչյուր գործարքի համար
Փոխանցում բանկի ներսում	1% յուրաքանչյուր գործարքի համար
Փոխանցում այլ ՀՀ բանկ	1% յուրաքանչյուր գործարքի համար, նվազագույնը 100 ՀՀ դրամ
Կոմունալ վճարումներ	20 ՀՀ դրամ յուրաքանչյուր վճարման դիմաց
Մուլտի-վաճառողի համար՝ սպասարկման տարեկան վճար	10 000 ՀՀ դրամ
Մուլտի-վաճառողի համար՝ առևտրի և սպասարկման կետերում վճարումների դիմաց միջնորդավճար	1%

## Սահմանաչափեր

Գործարքի տեսակ	Մեկ գործարքի սահմանաչափ	Օրական գործարքների քանակ	Օրական սահմանաչափ
Հաճախորդի միևնույն արժույթով սեփական հաշիվների միջև	500 000 ՀՀ դրամ	10	2 000 000 ՀՀ դրամ
Հաճախորդի տարբեր արժույթներով սեփական հաշիվների միջև	500 000 ՀՀ դրամ	5	2 000 000 ՀՀ դրամ
Ֆիզիկական անձանց միջև	100 000 ՀՀ դրամ	5	400 000 ՀՀ դրամ
Ֆիզիկական անձից փոխանցում իրավաբանական անձին	100 000 ՀՀ դրամ	10	400 000 ՀՀ դրամ
Իրավաբանական անձից փոխանցում ֆիզիկական անձին	100 000 ՀՀ դրամ	20	1 600 000 ՀՀ դրամ
Իրավաբանական անձանց միջև	200 000 ՀՀ դրամ	10	1 600 000 ՀՀ դրամ

## **mConverse մորթայլ բանկային ծառայության կանոններին կարող եք ծանոթանալ կայքում:**

### **Ծանուցում ֆինանսական համակարգի հաշտարարի վերաբերյալ**

Տեղեկացնում ենք, որ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ կողմից Ձեզ մատուցվող ծառայությունների հետ կապված տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:

Բանկի և Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջև կնքված համաձայնագրի համաձայն՝ Բանկը հրաժարվում է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից միայն այն գույքային պահանջների մասով, որոնց չափը չի գերազանցում 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, իսկ գործարքի գումարի չափը չի գերազանցում 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

**Հասցե՝ 0010 ք. Երևան, Մ. Խորենացու փող. 15**

**«Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն, 7-րդ հարկ**

**Հեռախոս՝ (+ 37460) 70 11 11**

**Ֆաքս՝ (+ 37410) 58 24 21**

**Էլ. հասցե՝ [info@fsm.am](mailto:info@fsm.am)**